ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1214 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 270-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերով և 3-րդ մասով, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 270-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կառուցվածքում կատարել հետևյալ կառուցվածքային փոփոխությունը՝

1) ստեղծել նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոն:

2. Այդ կապակցությամբ որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 11-րդ կետում՝

ա. լրացնել 5.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1) հանցանքների և հանցանք կատարած անձանց, վարչական իրավախախտումների և վարչական իրավախախտում կատարած անձանց վերաբերյալ միասնական տեղեկատվական շտեմարանների, ինչպես նաև պետական վիճակագրության ձևավորումը.».

բ. 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) հասարակական անվտանգության ապահովման և հանցավորության վիճակի, հանցավորության շարժընթացի համակողմանի վերլուծության իրականացումը, քրեածին իրավիճակի կանխատեսումը, դրա հիման վրա թեմատիկ, պարբերական հետազոտությունների իրականացումը և դրանց հրապարակումը, առկա մարտահրավերների ու ռիսկերի վերհանումը, դրանց չեզոքացման նպատակով համապատասխան որոշումների ընդունումը և իրականացման ապահովումը.».

2) 33-րդ կետում՝

ա. 6-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

բ. լրացնել 6.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1) հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնը:»:

3. Սահմանել, որ հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնը գործում է վարչության կարգավիճակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 20-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ